ՃԻԳ.

Կաթուղիկոսն վախճանեցաւ, բայց ոչ թէ իւր մահուամբն՝ այլ թիւնով սպաննեցին, մեծ վրդովմունք եղև ի մէջ հայոց, ի մէջ էրզրումու յառաջնորդն քարոզեաց և ծանուցում երաւ ասելով, եթէ այն յիշմիածնայ նստող գազանքն այն յարիւն արբուքն, այսուհետև ոչ նոցա նուիրակն թողումք մեր յերկիրս և ոչ յերկրէ մերմէ կաթուղիկոս յղեմք մինչև որ յարմատախիլ լինին և այլն[1]։ (Տէր Յակոբ Ղազարեան առ Մելգոնեան, 1753 յուլիս 17. [Էրզրում])։

ՃԻԳ.

Յերեկեան աւուրն ամենայն իշխանք հայոց կնքօք իւրեանց հաստատեցին զկաթողիկոսութիւնն քարաքաշեան աղէքսանդր վարդապետին՝ յուրախութիւն Կոստանդնուպօլսեցւոց, և ի տրտմութիւն փէրսիանացւոց։ Զահագինն՝ աթոռակալ չինեցին. և զչիք ամենապիղծ աթանասն ղըլավուզ։... Զգէորգն՝ որ երբեմն փաթրիկ եղև ի կոստանդնուպօլիս՝ որ այժմ առաջնորդ պուռսայու, թիւնեցին, բայց նա գոլով աճէմ ֆէնթպազը՝ իմացեալ վազվազ՝ զերծաւ[2]։ (Արանաս արեղայ առ Մելգոնեան, 1753 Օգոստ 1. [Պոլիս])։

ՃԻԴ.

Վասն Լիբանանացւոց՝ ծանիր, զի միտք ունին մին տեղի ըստանալ ի Հռոմ, նաևս կամին հաստատել զիւրեանց կարգն։ Սակայն յոյժ աբսոսամ զնոսայ վասն պակաստութեան գիտութեանցն... և վասն այսր պատճառի որ մին գիտութիւն մտցէ ի մէջ իւրեանց՝ երկու ուխտեալ պատանեակ ի նոցանէ Բրօբականտայ Գօլէճն դրին, որ զկնի ուսանելոյն իւրեանց ծառայիցեն ինքեանց, այսու պայմանաւ։ Անճաղ չեմ կարծեր թէմէլ բռնել տան։ (Դառայ և եղբայր Միաբանուրեանն Յովհաննէս Թովմաձեան, առ Մելգոնեան? 1754 մայիսի 10. Լիվորնիս)։

ՃԻԵ.

Ի կաթուղիկոսէն[3] եկն նամակ, զի յետ բազում նեղութեան հասեալ ի 3 մարտի, և ձեռնադրեալ ի վեցն՝ կաթուղիկոս, և ի յՁն ձեռնադրեալ ինքն զեպիսկոպոսունս բազումս. և ասէ ի նամակի յետ բազում օրհնութեանցն՝ սէր ունիլ ընդ միմեանս և միաբանութիւնս առնել։ Ուստի յօրէ յայնմանէ՝ յորմէհետէ եկն նամակն, վարդապետքն հայոց միշտ զրեթէ զմիաբանութեան քարոզն ասեն։ (Արանաս վրդ. տայի Սիմոնեան առ Մելգոնեան? 1754 ի Կ. Պոլիս, յունիս 1)։

ՃԻԶ.

Ակսաք զարդարել և յօրինել զգրքատունն մեր ծախիւք մինասայ արհիեպիսկոպոսին մերոյ, որ յօժարամտագոյնս ստիպեաց զմեզ ի նոյն։ (Մելգոնեան առ Հ. Իգնատիոս, 1754 Յունիսի 8. Վենետիկ)։

---

1. Այս ամէն մանրամասնութիւնները կը պակսին Զամչեանի Պատմութեան մէջ։
2. Նոյնպէս։
3. Աղեքսանդր Բ.է։